Հողային առանձին տուրքի մասին։ — 1) 1918 թ. յունուարի 1-ից վերացնել Հայաստանի տերիտորիայում ամէն տեսակի հողերի վրա դրուած տուրքերը։

2) Ներկայ 1918թ. վերացուղ հողային տուրքերի վճարողների վրա դնել առանձին տուրք հետևեալ հիմունքներով՝

ա. Տուրքի չափը սահմանել 15% ա՛յն եկամուտից, որը կը ստացուի՝ եթէ վերցնենք Կաղեոննայա Պալատայի*) 1910թ. տեսալների հիման վրա հաշուած արդիւնքը և տասնապատկենք այն, այսպիսով կը ստացուի՝ հաշուելով տուրքի չափերը կլոր թիւերով՝ Էջմիածնի գաւառում 1,378,000 ր., Երևանի գաւ. 962,000ր., Դիլիջանի գաւառում՝ 354,000ր., Նոր-Բայազէտի գաւառում՝ 677,000ր. և Դարալագեազի գաւառում՝ 313,000ր.։

բ. Տուրքի գումարը, որ հասնում է՝ համաձայն Կաղեոննայա Պալատայի որոշման՝ իւրաքանչիւր գիւղին, մասնատուում է հարկատուների մէջ գիւղական ժողովների հասարակական վճիռների համաձայն և այն հիմունքներով, որ կընդունեն գիւղական ժողովները։

գ. Հարկային թերթերն ուղարկում է Կաղեոննայա Պալատան Ֆինանսների մինիստրի կողմից սահմանուած ժամանակին։

դ. Անկանոն մասնատրման դէմ բողոքներ տրուում են հարկային թերթերի առաքումից յետոյ մի ամսայ ընթացքում։

ե. Բողոքները չեն կասեցնում մասնատրման գործողութիւնները։

զ. Հարկը տրուում է դանձարանին միանուագ՝ դեկտ. 15-ից, որ օրից և հաշուում է տուգանքը՝ ամսական 3%։

է. Ֆինանսների Մինիստրին է վերապահուում պակասեցնել հարկերի չափը մինչ հարկատուին կատարելապէս հարկից ազատելը, եթէ տուած գանգատների հիման վրա մասնատրումը նա կը գտնի անկանոն։

ը. Հողային հարկերի այն գումարները, որ մտցրուած են դանձարան 1918 թուի համար, հանուում են նոր առանձին հարկից։

3) Ի փոփոխումն եկամտային հարկերի կանոնադրութեան համապատասխան յօդուածների՝ հարկատուների արդիւնքը որոշելու նախնական աշխատանքներին, ինչպէս և մասնատրումը Հայաստանի տերիտորիայի վրա, բացի Երևան քաղաքից կատարում է հարկային տեսուչը։

4) Եկամտային հարկը տրուում է դանձարանին միանուագ՝ դեկտ. 15-ին, որ օրից և վերցուում է սահմանուած տուգանքը։

5) Եկամտային հարկի վճարումից 1918թ. ազատուում են՝ բացի Երևան և Նոր-Բայազէտ քաղաքներից՝ Հայաստանի տերիտորիայի մնացած բոլոր տեղերում հողի արդիւնքից հարկ վճարողները։

6) Եթէ Երևան և Նոր-Բայազէտ քաղաքներից դուրս հարկային տեսուչները եկամտային հարկի են ենթարկել հողը և այլ աղբիւրների արդիւնքները, նոր հարկը հանուում է հարկային տեսուչների որոշած եկամտային հարկից։

Հաստ. հոկտ. 25-ին 1918թ.

---

*) Արքունական Պալատ։